Ծերենց

«Թեոդորոս Ռշտունի» պատմավեպը

(Երկ.,Եր. 1985, էջեր՝ 443-637)

Առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում 1881թ.: Պատմավեպում ներկայացված են 7-րդ դարում արաբների արշավանքները Հայաստան և հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարն այդ բռնակալների դեմ հայոց իշխան, զորավար, մեծ դիվանագետ Թեոդորոս Ռշտունու առաջնորդությամբ (ծնվ. թիվն անհայտ է, մահ. 654թ. Դամասկոսում): Ըստ Մանուկ աբեղյանի, մեծ ժողովրդականություն վայելող Թեոդորոս Ռշտունին դարձել է «Սասունցի Դավիթ» դյուցազներգության կերպար՝ ի դեմս քեռի Թորոսի:

Թեոդորոս Ռշտունին Հայոց պատմության ամենաուշագրավ դեմքերից է. 628թ. նշանակվել է Մարզպանական Հայաստանի սպարապետ, իսկ 634թ.-ից վարել է նաև հայոց մարզպանի պաշտոնը: 637թ. Սասանյան պետության վերացումից հետո Մարզպանական Հայաստանը մի քանի տարի ձեռք է բերում անկախություն Թ. Ռշտունու գլխավորությամբ: Նա իր իշխանությանն է միավորել նաև Բյուզանդիային ենթակա Հայաստանը: Բյուզանդիան 640թ. Ռշտունուն շնորհել է պատրիկի և կյուրապաղատի տիտղոսներ և նրան ճանաչել Հայաստանի կառավարիչ իշխան: Թ. Ռշտունին հզորացրել է Հայաստանի ռազմական հզորությունը: Արաբների հայաստան ներխուժելուց հետո Թ. Ռշտունին 652թ. Ասորիքի արաբ կառավարիչ Մոավիայի հետ կնքել է դաշնակցային պայմանագիր, որով հայաստանն իրավաբանորեն ճանաչվելով խալիֆայության գերիշխանությունը, փաստացի դառնում էր անկախ,մանավանդ ապահովագրվում էր նենգ Բյուզանդիայի ոտնձգություններից: Արաբական 7 հազարանոց զորքի գլուխ անցած Թ. Ռշտունին Բյուզանդացիների նկատմամբ տանում է տպավորիչ հաղթանակ՝ արժանանալով Մոավիայի դրվատանքին: Հայ-արաբական պայմանագրի նորոգման նպատակով նա մեկնում է Դամասկոս, բայց այնտեղ վախճանվում է: Նրա դին բերվում է հայաստան և թաղվում է Ռշտունյաց տոհմական գերեզմանատանը:

Պատմական թեմային Ծերենցի դիմելու հիմքում ընկած էր հասարակական պահանջը. 1877-78թթ. տեղի էր ունեցել ռու-թուրքական պատերազմը, բալկանյան որոշ ժողովուրդներ ձեռք էին բերել անկախություն, Սան-Ստեֆանոյի նախնական համաձայնագրով և Բեռլինի կոնգրեսի վորոշմամբ հայկական հարցը նակախ պետականության, կամ գոնե ինքնավարության ձեռքբերման առումներով ամբողջությամբ դատապարտվեց ձախողման: Հուսահատ հայ ժողովրդին պատմական հերոսներով և դրվագներով ոգևորելը, ազատագրական ոգին վառ պահելը այդ ժամանակաշրջանի իսկական արվեստագետների խնդիրն էր: Եվ Ծերենցն այդ արվեստագետներից էր. նա «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպով ևս ձգնում էր նպաստել հայ ժողովրդի ազգային-ազատագրական ոգու վառ պահմանը: Թեոդորոս Ռշտունին հենց այն կերպարն էր,որը պետք էր մարտնչող հայությանը: Երե՛կ հայության բռնակալները Պարսկաստանը,Արաբական խալիֆայությունը և Բյուզանդիան էին, 1870-80-ական թթ. նրանց փոխարինում էին Օսմանյան և Ռուսական կայսրությունները, ինչպես նաև՝ գիշատիչ տերություններ Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրա-Հունգարիան, որոնց բռնակալ ախորժակներին կուլ գնաց հայկական հարցը: «Անգլիա բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է ամեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի (թուրքիայի- S.U.) մեջ տեղի ունին 1878 հունիսի 4-են վերջը»,- գրում է Ծերենցը («Փորձ», 1879, N 1,էջ՝ 208): Ծերենցը Թեոդորոս Ռշտունու մարտնչող կերպարի միջոցով հայ ժողովրդին բացատրում-հասկացնում էր, որ հայկական հարցի լուծման միակ ճանապարհը ազգային-ազատագրական պայքարն է, պետք չէ հույսը դնել քրիստոնյա մեծ

պետությունների փարիսեցիակական խոստումների վրա: Ծերենցը մեջ է բերում բյուզանդական Մորիկ կայսեր (582-602) նամակը պարսից Խոսրով Բ արքային, որում լկտիաբար ասված է. «Մի խոտոր ու անհնազանդ ազգ կա մեր մեջ և պղտորում է: Բայց ես իմը ժողովեմ և Թրակիայում գումարեմ, իսկ դու քոնը ժողովիր և հրամայիր արևելք տանել: Եթե նրանք մեռան, ապա կմեռնեն մեր թշնամիները և եթե սպանեն, մեր թշնամիները կսպանվեն, և մենք խաղաղությամբ կապրենք: Որովհետև եթե դրանք իրենց երկրում մնան, մենք հանգիստ չենք լինի» (Սեբեոս, գլուխ 7 Ե): Ահա մի գաղափարախոսություն հայկական հարցը լուծելու ճանապարհին, որը այսօր էլ մեծ տերությունները փայփայում են Հայաստանն իր ակտիվ ու եռանդուն ազգաբնակչությունից «բեռնաթափելու» նպատակով:

Պատմավեպում կերտվել է նաև Եզր կաթողիկոսի կերպարը,որը հարկադրված առերևույթ ընդունում է կաթոլիկություն հայ ժողովրդին Եվրոպայից քաղաքական օգնություն ակնկալելով, բայց՝ ապարդյուն, Եվրոպան, Հռոմի պապը մնում են անդրդվելի: Ուրեմն՝ հայ ժողովուրդն իր ազատագրության հույսը գլխավորապես պետք է դնի ինքն իր վրա, ինչպես որ քարոզում էր ու գործում «Երկունք թ դարու» պատմավեպի գլխավոր հերոս Խութեցի Հովնանը: «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպում Թեոդորոս իշխանը հենվում է ժողովրդի վրա, քաղաքական վեճերի բռնվում հույն զորավար Պրոկոպիոսի և պետական այլ գործիչների հետ, հմտորեն օգտվում է բյուզանդա-արաբական հակասություններից, հույսը նրանցից ոչ ոքի վրա չի դնում, այլ ժողովրդի գլուխ անցած, այդ բարդ իրավիճակներում ապահովում է հայաստանի կիսանկախությունը, որը, կարծես, թե անհնարին բան էր այդ ժամանակաշրջանում:

Պատմավեպի պատմական նյութի աղբյուրներն են՝

1) «Պատմութիւն Սեբեոսի» (աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի), Եր., 1979, գլ. 7Ե (էջ՝ 86). Գլուխներ՝ Խ (էջ 128-130), ԽԲ (էջ 134-130), ԽԴ (140-146), ԽԵ (146-148), ԽԶ (148-161), ԽԸ (163-166), ԽԹ (166-169), ԾԲ (173-177):
2) Ղևոնդ՝ «Պատմություն» («գրաբ. աշխ. վերածեց Արամ Տեր-Ղևոնդյանը»), Եր., 1982, գլուխ բ (էջ 20-21), գլ. Գ (22-24), գլ. Դ (24-27):
3) Կիրակոս Գանձակեցի՝ «Հայոց Պատմություն» (թարգ. Վ. Առաքելյան), Եր., 1982, էջ 52 (Եզր կաթողիկոսի մասով):

Տիգրան Սահակյան